ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անուշ Մեժլումյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2024 թվականի մայիսի 13-ից 17-ը

3. Հրավիրող կողմը.

Ավստրիայի իշխանություններ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հանրային կառավարում և կառուցվածքային բարեփոխումներ» (Public Governance and Structural Reforms) թեմայով գործուղման նպատակն էր հետազոտությունների և վերլուծությունների միջոցով բացահայտել հանրային կառավարման հնարավոր ազդեցությունները, վերլուծել, մասնավորապես, հարկաբյուջետային քաղաքականության մշակման շրջանակներում հանրային կառավարման և կառուցվածքային բարեփոխումների դերը:

5. Քննարկված թեմաները (հարցերը).

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

- Կառուցվածքային բարեփոխումներ և մակրոտնտեսական քաղաքականություն,
- Մի շարք բնագավառների (առողջապահության, կրթական և այլն) բարեփոխումների տնտեսական ազդեցությունը,
- COVID-19 ընթացքում և դրանից հետո սոցիալական պաշտպանության բարեփոխումները, ինչպես նաև դրա ծախսային գնահատումը Հարավարևելյան Եվրոպայի երկրների մասով,
- ԵՄ-ի արդյունաբերական քաղաքականության նոր հայեցակարգերը և ծրագրերը,

- Տնտեսական անհավասարությունը և դրա պատճառները, այդ անհավասարության բացասական հետևանքները, ինչպես նաև այն կրճատելու ուղղությունները,
- Հարկաբյուջետային քաղաքականության դերը, նպատակները: Բյուջետային հաշիվների և ցուցանիշների ուսումնասիրություն: Բյուջեի եկամտային և ծախսային մասերի վերլուծություն,
- Էկոլոգիական քաղաքականության շրջանակներում վնասակար արտանետումների մասով սահմանված հարկերի (էներգիայի հարկ, տրանսպորտի հարկ, ածխածնի հարկ) առանձնահատկությունները, հարկաբյուջետային գործիքների (բնապահպանական հարկերի) ազդեցությունը վարքագծի փոփոխության վրա,
- Էկոլոգիական քաղաքականության կայուն զարգացման շրջանակներում վերականգնվող էներգիայի համար նպաստավոր հարկային քաղաքականության սահմանման առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկման հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև դասախոսությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտան եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության մշակման գործընթացը դարձնելու առավել արդյունավետ:

Ստորագրությունը, ամսաթիվը: *22 մայիսի 2024թ.*